

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ

ԻՐԱԿԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռազմավարության զարգացման սեմինար



Մ.թ. հուլիսի 15-ին, Երևանում տեղի ունեցավ Ռազմավարության զարգացման սեմինար: Սեմինարի մասնակիցների կողմից քննարկվեցվին ինստիտուցիոնալ զարգացման մախորդ սեմինարի (22-23 հունիսի) ընթացքում Ցանցի անդամների կողմից արված առաջարկությունների հիման վրա մշակված գործարար շահերի պաշտպանության ցանցի Կանոնակարգի և Հուշագրի մախնական տարբերակները: Բոլոր առաջարկություններն ու մեկնաբանությունները քննարկելուց հետո Կանոնակարգն ու Հուշագիրը հաստատվեցին:



ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ռազմավարության զարգացման սեմինար

ՀՀ-ում ներդրվելու է ավելացված արժեքի հարկի ավտոմատացված հետվերադարձի համակարգ

Օրենսդրական մախանդություններ

Կառավարության հավանությունն են ստացել "Մնանկության մասին", "Կատական ակտերի հարկադիր կատարման մասին" ու ևս երկու օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրինագծերը

ՀՀ-ում ներդրվելու է ավելացված արժեքի հարկի ավտոմատացված հետվերադարձի համակարգ

ՀՀ-ում ներդրվելու է ավելացված արժեքի հարկի՝ ռիսկերի վրա հիմնված ավտոմատացված հետվերադարձի համակարգ:

Հանրությանը բավարարող տեղյակ է պահվել, որ Պետական տուների կոմիտեում ստեղծվել է 22 աշխատանքային խումբ, որոնք մշակում են էլեկտրոնային կառավարման նոր մոդուլներ և դրանց կիրառման հնարավորությունները: Հուլիսի 23-ից 24-ը Ծաղկաձորում տեղի ունեցած աշխատաժողովի ընթացքում ՊԵԿ-ի և ԱՄԵ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության ներկայացուցիչները քննարկել են ԱԱՀ-ի հետվերադարձի ավտոմատ ռեժիմի մշակման, դրա կիրառության և ծրագրավորման խնդիրների կարգավորման հարցերը::

Այս փուլում դեռևս տեղի են ունենում ներքին քննարկումներ, հետազայում, միանշանակ, քննարկումներին կընդգրկվեն փզնեսի ներկայացուցիչները:

Առաջիկայում Պետական եկամուտների կոմիտեն լայն հասարակության քննարկմանը կներկայացնի փաստաթղթեր, որոնցով առաջարկվում է բարելավել ավելացված արժեքի հարկի հետվերադարձի համակարգը:

Ծրագիրն իրագործվում է ամերիկայյն կողմի հետ համատեղ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության ֆինանսավորմամբ: Համապատասխան Փոխ-ըմբռնման հուշագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ԱՄՆ ՄՁԳ հայաստանյան առաքելության միջև ստորագրվել է այս տարվա մայիսի 4-ին, որը նպատակ ունի բարելավել հարկային վարչարարությունը, ինչպես նաև համապատասխան բիզնես գործընթացները:

Այս փուլում ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող Հարկային վարչարարության բարեփոխումներն օժանդակող տեխնիկական աջակցության ծրագիրը (ՀՎԲՕՏԱ) և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը նախաձեռնել են անցկացնել Հայաստանում ռիսկերի վրա հիմնված ԱԱՀ-ի վերադարձման ավտոմատացված համակարգին առնչվող աշխատաժողով:

Աշխատանքային խմբերի բոլոր անդամները՝ Հարկային ծառայության մասնագետները, ամերիկյան կողմի օժանդակությամբ փորձում են մշակել և գործողության մեջ դնել տվյալ համակարգը, որը լինելու է էլեկտրոնային կառավարման համակարգի շարունակությունը: Այս աշխատաժողովի ընթացքում քննարկվել են ԱԱՀ-ի ավտոմատ վերադարձման համակարգի չափորոշիչներն ու դրանց գնահատումը, բիզնես գործընթացները և ավտոմատացված համակարգի համար առաջադրվող տեխնիկական լուծումները:

”Կոնկրետ եզրահանգումներ կան, կան կոնկրետ սահմանված ժամկետներ, և մինչև այս տարվա ավարտը մենք ամբողջական կունենանք այդ ծրագիրը, որը կլինի գործողության մեջ, և մեր հարկ վճարողները, ովքեր պարտաճանաչ և բարեխիղճ կերպով կառուցել են իրենց կենսագրությունը՝ ԱԱՀ-ի հետվերադարձի սխեմաներում, կարող են իրենց հայտն ավտոմատ հանձնելով, ստանալ իրենց հետվերադարձն ամբողջ ծավալով”,-տեղեկացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռուբիկ Բոչարյանը:

Աշխատաժողովի ընթացքում Պետական եկամուտների կոմիտեի և ԱՄՆ ՄՁԳ հարկային ծրագրի մասնագետները քննարկել են ԱԱՀ-ի ռիսկերի վրա հիմնված վերադարձման համակարգի մշակման և ներդրման տարբեր սպեկտրներ, հանգել համատեղ որոշումների, ինչպես նաև լուծումներ են ապահովել առաջադրանքներից մի քանիսի համար:

Երկօրյա քննարկումները մասնագետները դրական են գնահատում, հայտարարելով, որ դրանք մոտեցրել են հիմնական նպատակին՝ ԱԱՀ-ի վերադարձման ռիսկերի վրա հիմնված գործուն համակարգին: Իսկ այդ դեպքում հնարավոր կլինի բացահայտել հավանական կեղծիքը, կմեծացնի ՊԵԿ-ի վստահությունը՝ ԱԱՀ-ի վերադարձները վճարել նվազագույն ռիսկով: Դա նաև կնպաստի հարկային մարմինների աշխատանքի թափանցիկության վերաբերյալ հարկ վճարողի ընկալմանը:

”ԱՄՆ ՄՁԳ հարկային ծրագրի և ՊԵԿ-ի միջև կազմակերպված այս ծրագիրը մեզ ավելի մոտեցրեց այս առումով մեր հիմնական նպատակին՝ ՀՀ-ում ներդնել ԱԱՀ-ի ռիսկերի վրա հիմնված ավտոմատացված վերադարձի համակարգ: Այն ունենալու դեպքում միանշանակ կշահեն թե հարկ վճարողները, թե պետությունը: Հարկ վճարողները մասնավորապես կշահեն այն առումով, որ իրենց մոտ կավելանա ավելի շրջանառու միջոցներ, իրենց բիզնեսն ընդլայնելու և նոր ներդրումներ իրականացնելու առումով, և պետությունը՝ առումով՝ երկարաժամկետ կամ միջնաժամկետ առումներով կավելանան եկամուտները”,-նշել է ՀՎԲՕՏԱ ծրագրի ղեկավար Արամ Մորադյանը:

ԱԱՀ-ի վերադարձման արդյունավետ համակարգը Հայաստանում զգալիորեն կբարելավի բիզնես միջավայրը՝ նվազեցնելով այն անորոշությունը, որը կապված է արտահանումների և ԱԱՀ-ի վճարման կարգապահության հետ: Միաժամանակ, ԱԱՀ-ի վերադարձի ապառքների քանակի նվազումը մասնավոր ֆինանսական կապիտալ կազմալի բիզնեսի զարգացման և արտահանումների ոլորտի աճի խթանման համար:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին



AFIC

Օտարերկրյա Ներդրումների և Համագերժակցության
Ասոցիացիա



Մասնավոր Չեռներեցության Միջազգային Կենտրոն
(ԱՄՆ)